

Հարց ե ծագում, թե ինչո՞ւ բուրժուական պետու-
թյունները խորհրդային սոցիալիստական պետությա-
նը պետք ե վերաբերվեն ավելի մեղմ ու ավելի բա-
րի-դրացիական, քան իրար նույնատիպ բուրժուական
պետություններին: Ինչո՞ւ պետք ե նրանք խորհրդա-
յին Միության թիկունքներն ուղարկեն ավելի պակաս
թվով լրտեսներ, վնասարարներ, դիվերսանտներ ու
մարդասպաններ, քան ուղարկում են իրենց ազդակից
բուրժուական պետությունների թիկունքները: Վոր-
տեղի՞ց եք դուք այդ վերցրել: Մարքսիզմի տեսակե-
տից ավելի ճիշտ չի՞ լինի արդյոք յենթադրել, վոր
բուրժուական պետությունները խորհրդային Միու-
թյան թիկունքները պետք ե ուղարկեն կրկնակի ու
յետակի ավելի վնասարարներ, լրտեսներ, դիվեր-
սանտներ ու մարդասպաններ, քան ամեն մի բուր-
ժուական պետության թիկունքները:

Պարզ չե՞ արդյոք, վոր քանի գոյություն ունի
կապիտալիստական շրջապատումը՝ մեզանում գոյու-
թյուն են ունենալու վնասարարներ, լրտեսներ, դի-
վերսանտներ ու մարդասպաններ, վորոնց մեր թի-
կունքներն են ուղարկում ոտարերկրյա պետություն-
ների գործակալները:

Այս ամենի մասին մոռացել են մեր կուսակցական
ընկերները, և մոռանալով այդ մասին՝ հանկարծակիի
յեկած յեղան:

Ահա թե ինչու ճառպոնա-գերմանական վոստիկանա-
կան պահնորդային բաժնի տրոցկիստական դաժնա-
կալների լրտեսական-դիվերսիոն աշխատանքը մեր
վորոշ ընկերների համար բոլորովին անսպասելի բան
դուրս յեկավ:

(Շարունակությունը 2-րդ ետում)